

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏՄԱՆԻԹԵԱՆ ՀԻՆ ԱԽԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ

ՔՆ'ԱՌԻԹԻԿԻՆԸ. (Արարատ, № 4).

Փոքր Ասիայի ամենաբարձր մասը բռնած է Էրզրումի կուսակալութիւնը, որը կտրատված է մի քանի լեռնաշղթաներով *). Այստեղ կգտնվի և փրատի, Կուրի, Ճորսի և ուրիշ բազմաթիւ նշանաւոր գետերի գլխաւոր ջրաբաժանումն, որոնք կհոսն զանազան ուղղութեամբ։ Այստեղ Քինդեօլ լճերից և սարերից սկիզբ կառնէ Հայաստանի գլխաւոր գետը Երսի՝ Քինդէօլգաղի աջ կողմից միանալով միմեանց հետ կձգվին նախ հիւսիս — արևելք և յետոյ հարաւ — արևելք Ակրուլաղ, Սիփան — Դաղ և լն. անոնով քանի մի լեռնաշղթաներ, Զախ կողմից Ակմեսէր, Սողանլու և Ալագեազ սարեր կտարածվին Երասիսը այս սարերի մէջով կանցնի, որոնց մեծ մասը հրարդեային ծագումն ունին, որովհետեւ այժմեան Երասիսի հովտի մէջ կգտնվին հրափրփուրի առաւտ հեղեղատներ, հաստ քարային շերտի ձևով, որի մէջից Երասիսը կողըից փոքր ինչ ներքեւ կբանայ իւր համար գուռը և ոռոգելով բազմաթիւ պտղաբեր հովիտներ, աղեղնաձև կշրջի գեպի հարաւ — արևելք և կհոսէ մինչև Զուղայ. Օրդուրաղի և անձամական կողմից Դարաբաղի շղթան, իսկ աջ կողմից Դարագալին միմեանց այնպէս կմօտենան, որ միայն Երասիսի նեղ շերտը նոցա կբաժանէ։ Կասկած չկայ, որ նախապատմական ժամանակներում այս երկու շղթան ևս մէկ էին, և Երասիսը պէտքէ ծակէր այս քարային հաստութիւնը **). Յետոյ անցնելով մի քանի տասնաւոր վերստ սարսափելի առապարների և խոր քարանձաւների մէջով, Երասիսի ջրերը ազատութիւն կստանան։ Այս հոսման տեղը Հայերը Քարսուալ կանուանէին։ Այնուհետեւ կմողնենք Երասիսի հոսումն, որը իւր աղբերակներից մօտ 875 վերստ անցնելով և միանալով Կուրի հետ, կթափվի Կասպեան ծով։

Ոռոգելով Թիւրբիայում Աերին — Բասեանի, Ներքին — Բասեանի, Կաղզուանի գաւառները և Զլտրան հովիտը, Երասիսը իւր հոսման մօտ 150 վերստ անցնելով, կմտնի Մատսիայի սահմանները, զօրանալով փոքրիկ գետակներով և աղբերակներով, Երասիսի բարձրութիւնը ծովի մակերևոյթից Կաղզուանի մօտ 3825 ոտ. է, Օրդուրաղի մօտ — 1963 ոտ. Կա կցածանայ Կողըի մօտ 16 ոտ., իսկ Մեղըի մօտ 15/, ոտ. իւրաքանչիւր վերստին, Երասիսի լայնութիւնը զանազան տեղերում զանազան է, 30 ից մինչև 100 սաժէն։ Զուրը խմելու համար առողջարար է և համեզ, Երասիսի մէջ կմափիվին բազմաթիւ գետակներ մանաւանդ ձախ կողմից, Կորա վերին և միջին հոսանքի ուղղութեամբ կերևին եկեղեցիների, վանքերի աւերակներ,

(*) Տես Կավկ. օրացոցի մէջ, 1851 թ. պ. Աւմանցի յօդուածը Երասիսի եւ նորա հոսած տեղերի նկարագիրը.

(**) Ստրաբոն (X. 531) կամէ, թէ հին ժամանակներում Երասիսը հասնելով մինչեւ այս սարերը եւ գուրս գալու անդ չունենալով, կտարածվէր այնտեղ եւ լճեր, կկաղմէր, եւ թէ Յասովն բացած է նորա ելքը։

Հնութիւնների բազմաթիւ մնացորդներ, որոնք կվկայեն թէ այս հովտում երբեմն բազմաթիւ բնակիչներ են եղած: Բայց մեզ աւելի ևս կհամոզեն այս երկրի նախկին հարստութեան և մեծութեան մասին հոյակապ քաղաքների և հին հայկական թագաւորութեան մոյրաբաղաքների բազմաթիւ աւերակները, օրինակ Աւաղարշապատ, Երուանդաշատ, Աւաղարշաւան, Արտաշատ, Գուբին, Արմաւիր, Գառնի, Նախիջևան, Զուղայ, Քագարան և ուրիշներ: Այս աւերակները ամեն յիշատակարաններից աւելի ճարտար կձառեն Երասխի ափերի անցած մեծութեան և բարօրութեան մասին:

Այս սոյն Երարատեան նահանգում, պատմութեան խօսքերին համաձայն, նոյն ինքն Ալագեազի մօտ (Արագած, 13454 ոտ.) բնակեց հայկական ազգի ցեղապետ Արքան: Այստեղ և Երզրումի կուսակալութեան մէջ, ըստ ամենայն հաւանականութեան, բնակեցին Հայերը, նախ քան պատմութեան մէջ երեխլը և այդ տեղից սկսան ցրվել զանազան կողմեր և բռնել կեց երկիրներ:

Երարատեան նահանգում Մասիս սարը, Արտերտ երկրի սարի մասին Աստուածաշնչի պատմութեան մէջ գտնված խօսքերի պատճառով ինքն Երարատի անուն ստացաւ: Այս հանգամանքը, մեր կարծիքով, տարակուսութեան շատ առիթներ տուած է և կտայ: Այս տարակուսութիւնները զիսաւորապէս կառաջանան նորանից, որ այժմեան Մեծ Երարատը կընդունեն այն սարի տեղ, որի վերայ կանգնեց տապանը, թէև այս հասարակաց ընդունած աւանդութիւնը բոլորովին չէ գտնվում նաև հայկական հին մատենագիրների մէջ: Թէ ո՞ր ժամանակից սա տարածվեցաւ, չեմ կարող ասել, բայց հաւանական է, որ նա յառաջ եկած լինի բառերի խառնաշխիթութենից. Արտերտ երբէ մէջ եղած սորէ փոխանակ ասել են Արտերտ: Եռաւել հին աւանդութիւնների մէջ այս վերջին խօսքը աւելի գործածական է:

Այսուամենայնիւ, բացի Այրարատեան նահանգից, հին հայկական մատենագիրների մէջ կգտնվի ուրիշ նահանգի անունը, որ շատ նման է իւր ձեռով Այրարատի հետ: Սա Արտերտ նահանգն է Անի լքից դեպի հարաւ, հետեւաբար Հայաստանի հարաւում, և ոչ թէ Երասխի վերայ: Աւրեմն Տովսէս Խորենացին, քաղելով Մար—Երասի տարեզրութենից, կասէ որ Հայկը թողնելով Բարելոն, բոլոր իւր ընտանիքով ուղերձեցաւ դեպի հիւսիս Երարատ երկիր և բնակեց նորա մէջ (զիր. Ա): Բայց մեզ յայտնի է աւանդութիւններից, որ Հայկը չէ թողած Անի լքի շրջակաները: Յետոյ կասէ նոյն մատենագիրը. Տիտանեան—Բելը հալածելով Հայկին, ուղերձեցաւ Երարատ երկիրը և մոտե Կազմոսի հողերը, որոնք ինչպէս մենք կտեսնենք, Վանից դեպի արևելք կգտնվէին. Սեբէոս է. դարի մատենագիրը իւր ձեռին Մար—Երասի զբքի ուրիշ խմբազրութիւնն ունենալով և պատմելով Հայկեանների տիրապետութեան առաջին ժամանակների մասին, չորս անգամ կյիշէ Հայաստանի հարաւում եղած Երարատ երկրի անունը, և նմանապէս զանազանութիւն կդնէ Երարադի և Այրարատի մէջ, (վերջը Այրարատ ձեւ Երարատ է զարձել):

Այլուրատեան նահանգ միշտ կնշանակէր և կնշանակէ Երասխ
զեսի հովիտը Նորա միջին հռանքը, այն ինչին որ Յոյները Աբանին ու-
ռին անուն կտային. Բոլոր հայկական մատենագիրները, զինաւորապէս
ամենահները գործ կածեն Այրարատ ձեզ, և ոչ Արարատ. Խորենացին
կասէ, որ այս անունը իւր ծագումն առած է Հայաստանի զիւցազնական
թագաւոր Արայից, և կնշանակէ Աբանի բառուուն. Բայց նա չէ ասում թէ ի՞նչ
լեզուով է նշանակում այս և ինչի՞ն Արայի անունը բարձութեան մէջ դար-
ձած է Այրու. Ասսենք գարձեալ, որ Հայերը Այրարատ ասելով հարաւա-
յին Հայաստան չէին հասկանում երրեք, գուցէ թէ միայն այն ժամանակ,
այն ևս շատ սակաւ, երբ Խօսքը այրարատեան հողերի մասին էր այն մըտ-
քով ինչպէս կասպի. Անդիական հողեր, որը նոյնպէս Անդիա չէ.

Աբանի անունը բոլորովին ուրիշ նշանակութիւն ունի. Նախ, այս բառը
իւր առաջին երկելուց սկսած ցոյց կտայ Հայաստանի ուրիշ մասը, զէպի
հարաւ, Երկրորդ, այս բառը կգտնվի միայն Սեմականների մէջ և ս զբքի
մէջ, իսկ հայկական մատենագիրներից միայն նոցա մէջ, որոնք քաղած են
Մար—Աբաս Ասորուց, այսինքն նոյնպէս Սեմական մատենագրից. Ասորես-
տանցիները, որոնք անգաղար արիւնահեղ պատերազմներ կանէին իւրեանց
զրացի հիւսիսային ազգերի հետ կանուանեն նոցա Ո-բ-բ-ր-ս- երկրի ընա-
կիներ, երբեմ ևս Աբանի, որ նոյն է ինչ որ Աստուածաշնչի Արարատ:

Այժմ ինդիրը նորա մէջ է թէ Ասորեստանցիները և միւս Սեմականները
Արարատ բառով ամբողջ Հայաստան կհասկանայի՞ն թէ հարաւում եղած
նորա մի որոշեալ մաս, ինչպէս մի առանձին նահանգ, Դիցուք թէ մինչեւ
անգամ մի ժամանակում *) Արարատ ամբողջ թէ հիւսիսային և թէ հա-
րաւային Հայաստանը կանուանիւր. Այս զէպ քում ևս եթէ քննենք այն
բոլոր տեղերը, ուր այս անունը կդորձածվի, մենք կհամոզվինք, որ թէ
Հայերի Աբանի և թէ միւս Սեմականների Աբանի, կարող են նշանակել
միայն Հայաստանի հարաւային մասը:

Երկու հօմանական բայց միեւնացից անկախ Այրարատ և Արարատ բառերի
ծագումն պատահական էր արգե՞ք, թէ այս անունը բերվեցաւ արեւելքից
հիւսիս ինչպէս և շատ միւս բաները, թէ ընդհակառակն էր—շնորհ կա-
մենում վճռել: Այն պարզ է միայն, որ երբ Հայերը Արարատ ասելով
Երասմի հովիտը կհասկանային, Սեմականները նորա հօմանական Արարատ
ասելով ի նկատի ունէին Վանի լճի շրջականներում եղած հարաւային Հա-
յաստանը մինչեւ Քրիստոն սարերը **): Երկու աշխարհազարական անուն-

(*) Թէիւ այն ժամանակում Հայաստան անունին չէր կարելի այն ընդարձակ նշանա-
կութիւնը տալ, ինչ որ նա ստացաւ վերջը Պարթեւնների ժամանակը.

(**) Հէնիիկան Ո-տութիւնուցի կարծիքն եւս նոյն է Արարատի հարաւային գրութեան
վերաբերմումք. On the Aloradians of Herodotus, փոքր յօդուածում, որ ապրած է
երեւ յաւելուած History of Herodotus by George Rawlinson, Vol. IV, New Edition, Lonl, 1862. Եր. 213—206, Essay III.

Ները այդպէս սահմանելու պայմանով միայն մեզ համար հասկանալի կլինին հին մատենագիրների այնպիսի տեղերը, որոնք ըստ երեսին հակառակ են միմեանց:

Խոպյու մարգարեի մէջ զլ. Լէ. 38. ասված է. « Եւ մինչդեռ երկիրպագանէր ի տան իւրում Ասրաքայ կոոց իւրոց, Ազրամելէք և Սարասար որդիքի նորա սպանին զնա սրով, և ինքեանք գնացին փախստական յերկիրն Արարագայ »: 2-որբորդ թագաւորաց զրբի մէջ կայ զլ. ԺԹ. 37. « Եւ եղե մինչդեռ երկիրպագանէր ի տան Նեսրաքայ Աստուծոյ իւրում, և Ազրամելէք և Սարասար որդիք նորա հարին զնա սրով, և ինքեանք զերծան յերկիրն Արարագայ »: Այստեղ երկու զէպքում ևս խօսքը Ասորեստանից զէպի հիւսիս եղած երկրի մասին է, և ոչ թէ սարի մասին: Իշարէէ այս անունը աւելի որոշ նշանակութիւն ունէր Տրէաների համար քան թէ մեզ համար: Անեքերիմ որդիների Արարատ երկիր, այսինքն Հայաստան, փախչելու մասին եղած աւանդութիւնը պահպանված է նաև Հայերի մէջ: Դիցուք թէ նա մտած է Հայերի մէջ Աստուծածաշնչից: բայց այս զէպքում ևս նա մեզ համար նշանաւոր է նորանով, որ մենք նորանից կիմանանք: թէ հին Հայերը Աստուծածաշնչի ասածովն Արարատ երկիրը կիմանացին: Խորենացին (գիր. Ա. զլ. ԻԳ). կասէ « Զոր սպանեալ որդուոց նորա Ազրամելայ և Սանասարայ, եկին փախստական առ մեզ: Յորոց զմին յարեմաից հարաւոյ աշխարհիս մերոյ, Արք է առանձն նորին Առաքեալունք: ընակեցանէ Ակայորդին մեր քաջ նախնին, այսինքն զՄանասարն: և ի սմանէ սերեալ լոցին զՄիմն ասացեալ լիառն...: Իսկ Արգամոզան (Ազրամելէք) յարեւելից հարաւոյ նորին կողմոն բնակեալ, ի սմանէ ասէ պատմագիրն լինել զՄրծրունիս *) և զԳնունիս »: Թովմայ Արծրունին նորմակէս յառաջ կրերէ իւր ցեղապետներին Անեքերիմ Ազրամելէք և Սանասար որդիներից, որոնք փախսան Հայաստան և բնակեցան Սէմ սարի մօտ (եր. 5):

Հայերը Սէմ սար կամ սարերը կանուանեն Տօրոս սարի այն Ճիւղը, որ կտարածվի Եփրատի (Մուրատ—չայ) արեւելեան աղբերակի դուզընթացար զէպի Աւանի լիճը, Այս սարերի Խզը Ճիւղի մասին Թովմայ (եր. 135) կասէ, որ այնտեղ բնակեցան ասորեստանցի այն հասարակ մարդիկը, որոնք փախսած էին Ասորեստանից Անեքերիմ որդիների հետ միասին: Հեղինակը մանրամասն կնկարագրէ նոցա և կասէ, թէ նոքա իւրեանց Սանասիայ կանուանեն: Արծրունիների իշխանական ցեղը բաւական յայտնի է Հայաստանի պատմութեան մէջ: Նոցա կալուածները կդժնվէին Աւանի լճի մօտ: Մենք կտեսնենք որ հին Հայերը Հայաստանի հարաւում ցոյց կտան այն երկիրը, որը սուրբ գրքում Արարատ կանուանվի:

(*) Անեքերիմ անունը մինչեւ վերջին ժամանակներու շատ գործածական էր Արծրունիների իշխանական ցեղի մէջ:

Փաւստոս Քիւզանգացու (գ. դար) ժ. զիսում կզանցի Սուրբութ սարերի անունը. Այս զլուխը ըստ ամենայն հաւանականութեան, քաղված է ասուրի սուրբերի Քարքից, որովհետեւ նորա մէջ կնկարազրվին Ս. Յակովը Մըծրընի եպիսկոպոսի քաջութիւնները, որ գ. դարի սկզբում հայրապետ էր. Այստեղ կասմի. « Խաղաց զնաց Յակովը յիւրմէ քաղվաքէ անտի զալ հասանել ի լիրինս Հայոց, ի լեառն Սարարագայ ի սահմանս Այրարատեան տէրութեան ի գաւառն Կորդուաց » : Պ. Էմինը, Փաւստոսի պատմութեան ֆրանսերէն թարգմանիչը (Collect. des histor. etc. L. եր. 218) իւր սովորութեան համեմատ առանց ըմբռնելու խօսքի իմաստը, լուսանցրում Սարարագ ձևը արտազրողի սխալ կհամարէ Արարատի փոխանակ (le mont Ararat, le Masis des Arméniens), այսինքն՝ Փաւստոսի Սարարապը այն սար կհամարէ, որը այսօր Մեծ Արարատ կանուանցի. Պ. թարգմանիչը ուշքէ դարձրած այն բանի վերայ, որ հեղինակը բաւական պարզ կորոշէ Սարարապի տեղը. « Ես սահմանս Այրարատեան տէրութեան ի գաւառն Կորդուաց » : Այստեղ արտադրօղները մեղաւոր չեն. Մեղաւորը պ. թարգմանիչն է, որ չէ նկատած այն, որ հեղինակը Այրարատուն ուելուն տաելով կհասկանայ ընդհանրապէս հայկական տէրութիւնը, իսկ նորա մէջ Կորդուիք նահանգը, ուր Սարարագ սարը կդժնվի. Այսպէս զիրքը պարզ որոշելուց յետոյ օտարութի կմուտի մեղազրի արտադրողներին և միենոյն ժամանակ խառնել երկու բոլորովին առանձին և միմեանցից հեռու եղած տեղերը.

Մեծ Արարատ սարը, le Masis des Arméniens, կդժնվի Այրարատեան նահանգում Երասխից ոչ հեռու, մինչդեռ Կորդուիք նահանգը, Կորճայքի մոսը 15 գաւառներից մինը, որոնց բաժանված էր հին Հայտաստանը. Վանի լճից զեպի հարաւ կդժնվէր, Կորդուիքն (Կորդուի - ժողովուրը) յայտնի էր հին գասական (յշն և լատին) մատենագիրներին զանազան անուններով. Կարմուխի, Կորդիէի, Գօրդիինի, Գօրտինի, Gordiani և այլն. Կոքակապրէին, ինչպէս ասված է, Վանի լճի հարաւում Տօրոս սարերի ձիւղերում. Այս նահանգը այն երկրի մի մասը կկաղմէր, որը ու զիրքը Աբրուտ կանուանէ. Քաղդէական Աստուածաշնչի մէջ Աբրուտ երկրի տեղը ուղղակի զրված է Kardu (Assem. Հ. II, եր. 113. Հ. III, եր. 734). Մենք կկարծենք որ պ. Էմինին սխալեցրած է այն հանգամանքը, որ այս զիսի մէջ կխօսի Սարարապի մասին, որի վերայ կանգնեց տապանն, և որի վերայ, ըստ աւանդութեան, պահպանված են տապանի մնացորդները. Իսկ պ. Էմինը այդ սարը համարած է Մեծ Արարատը, առանց պարզելու իւր համար թէ որքան հին են այն հայկական աւանդութիւնները, որոնք համաշխարհական ջրհեղեղի մասին եղած տասպելախտն պատմութիւնները կկապակցեն Մեծ Արարատ սարի հետ, որին այժմ Հայերը Մասիս կանուաննեն:

Նոյեան տապանի մասին եղած ամենաշին տեղեկաւթիւնը մենք աւնինք Ելից զրքի ը զիսում, ուր ասված է. կանգնեց տապանը Արարատի սա-

րերի վերայ, Այնուհետև Բերողի՝¹⁾ Հատուածների մէջ, որոնց պահպանած են Պօլիչիստօր (Բազմավէտ) և Արիւդէնոս, առաջնի մէջ ասված է, նաւը կանգնեց Հայութեան: Քսիսուստրիայ նաւակի մասերը մինչեւ ոյժմ կպահպանվին Հայութեան կորուստան առեւթեան, և ճանապարհորդները կառնեն նոցանից ձիւթ, որը վատ ազգեցութիւնների գէմ պահպանողական միջոց է: Երկրորդի մէջ ասված է, «Սիսուստրի նաւը կանգնեց Հայութեան»²⁾: Այս նաև փայտեայ կտորները Հայաստանի բնակիչները իւրեանց վերայ կրիեն իրեւ Համայիլ իւրեանց վտանգից պահպանելու համար», Յովսէփ Փլաքիոսի մէջ (I. զլ. III.) ասված է: «Տապանը կանգնեց Հայութեան: մի սարի գագաթի վերայ . . . Այն տեղը, ուր նոյ տապանից զուրս եկաւ, Հայերը կանուանեն Առ Նոյուն: այսինքն Նոյի հիւթեւը»³⁾: Նիկողայոս Դամասկացին կասէ: «Հայաստանում Մէլէտ-ից»⁴⁾ վեր կայ Յարէս բարձր սարը, որի վերայ, աւանդութեան Համաձայն, շատերը ազատվեցան ջրհեղեղից, թէ Նորա գագաթի վերայ կանգնեց տապանը, և թէ այնտեղ երկար պահպանվեցան տապանի փայտի մնացորդները: Սուրբ Հայերի մէծ մասը Համաձայն են այն մասին, թէ տապանը կանգնեց Հայիւնան առեւթի վերայ, առանց Ճիշդ որոշելու դիրքը: Ա. Եպիփանոս կասէ, որ ջրհեղեղից յետոյ տապանը կանգնեց Հայութեան և Կորուսէտէ երկրի մէջ եղած Արտեր սարերի: Լուսու գագաթի վերայ, Ուրիշ տեղ կասէ, տապանի մնացորդները ցոյց կտան Կորուսէտէ երկրում»⁵⁾:

Արաբական տեղեկութիւնների Համեմատ տապանը կանգնեց Զութէ սարերի վերայ (գուցէ Զուրղի, Քուրղի) այսինքն միւնոյն Քրղի սարերի վերայ:

Համացխարհական ջրհեղեղի մասին նոր գտնված բարելոնական վիպասանութեան⁶⁾ մէջ, այն սարը, որի վերայ կանգնեց Սիսեաի նաւը, կանուանվի կամ աւելի լաւ ասած, մինչեւ ոյժմ կկարգացվի Նիզիր⁷⁾:

(1) Eusebii Pamphili, Chronicon Bipartitum, ex arm. textu Aucher. Վ. 1818, եր. 18, 25:

2) Հայաստան սահլով չորէտքէ իմանալ անշուշտ հիւսիսային Հայաստան, Արդէն Հերոդոտոս (I. 94), ուստմելով Հայերի Բարելոնի հետ ունեցած վաճառականութեան մասին, կասէ, որ Հայերը Աստրասանից աւելի բարձր կարուէն, այսինքն Նինուէից դէպի հիւսիս, որեւ այն Արտարադ կնշանակէ, որի մասին մենք կխօսենք:

3) Flavii Josephi opera, graece et latine. Guil. Dindorfius. Փարիզ. Գիրք I, III, 6:

4) Տեղ վերեւ:

5) Samuelis Bocharti—Phaleg. Chanaan. Edit. quarta. Գլ. III.

6) Smith (George) Chaldaean account of the Deluge, from terra cotta Tablets found at Neneveh, and now in the British Museum, London, 1872.

7) Նիզիրի հշանակութեան մասին տես յօդուած Dan. Haigh. Zeitschr. für Aegypt. Sprach. 1874, Mai—juni; Այսպէս Fr. Lenormant, Les premières civilisations. Paris, 1874 և. II. եր. 40, Ժանօթ. (I.)

Աւրեմն ջրհեղեղի մասին եղած ամենաշին աւանդութիւնների մէջ մենք չենք տեսնում ոչինչ այնպիսի բան, որ մեզ իրաւունք տաք համարելու Մեծ Արարատ այն սարը, որի վերայ կանգնեց տապանը:

Ըստհակառակն, զրեթէ բոլոր տեղեկութիւնները ցցց կտան մեզ Հայաստանից գեպի հարաւ Քրդի սարերի վերայ, Այսկայն, մենք այն հարցով չենք զբաղած, թէ տապանը որտեղ կանգնեց, ևս գուցէ արդարեւ Մեծ Արարատի վերայ կանգնեց: Մենք միայն կքննենք այն հարցը, թէ չին մատենագիրների մէջ Արտեր ի՞նչ կնշանակէ, և պէտքէ արդեսք խառնել նորան Երասիսի վերայ եղած Այրարատ նահանգի կամ թէ Մեծ Արարատի չետ: Բաւական քանակութեամբ յառաջ բերված և միմեանց չետ համաձայն աւանդութիւններ ի հարկէ իւրեանց նշանակութիւնը ունին: Նոյն իսկ հայկական հին մատենագիրների մէջ չեն պահպանված այն մասին աւանդութիւններ, թէ տապանը կանգնեց Մեծ Արարատի վերայ, ըստհակառակն Թովմայ Արծրունին (եր. 17) ուղղակի կասէ, թէ տապանը Կարդուք սարերի վերայ հանգիւաւ:

Միայն երանելի Հերոնիմոս կյիշէ Երասիսի հովաի մասին, որից կերեկ որ նա տեղեկութիւն ունէր հայկական Այրարատ նահանգի մասին. Ararat, regio in Armenia comestris est, per quam Araxes fluit, incredibilis ubertatis ad radices Tauri Montis qui usque illuc extenditur. Ergo et arca in qua liberatus est Noa cum liberis suis cessante diluvio, non ad montes generaliter Armeniae delata est, quae appellatur Ararat, sed ad montes Tauri altissimus qui Ararat imminentibus campis. Այս տեղեկութիւնը ի հարկէ կարօղ է ակնարկել Հայաստանի մէջ յետագայ աւանդութեան իմաստով աւանդութեան գոյութիւնը. Մենք այս չենք մերժում, բայց նա ոչ մի տեղ պարզ արտայայտված չէ:

Միայն յետագայ ժամանակում համեմատարար (ահս Rubruquis) Հայերի, մանաւանդ Այրարատեան նահանգի բնակիչների մէջ տապանի կանգնած տեղը Մեծ Արարատ Մ—է համարվեցաւ, և ազգային բառազնութիւնը շատ աշխատեց այս եղելութեան մասին եղած յիշատակը կապել Հայաստանի մի քանի տեղերի անունների հետ: օրինակի համար, Երևան, Ակուրի, Նախիջևան, Մարտագ, Առնշյուն և այլն, որոնք իրր թէ ծագած լինին Ար———էց, այսինքն խաղողի որթը տնկեց, Նու—իշւա, այսինքն իջնելու առաջին տեղը, Մայ—անդ, այսինքն մայր այնտեղ (նոյի կինը). Առ—նոյստն, այսինքն նոյի ստորոտը և այլն, Իշարկէ այսպիսի ստուգաբանութենից չէ կարելի պահանջել, որ նոքա գոհացուցիչ լինէին զիտնական պայմաններին: Եթէ մենք ուշք զարձնենք այս տեղերի զրութեան վերայ, պիտի տեսնենք, որ բացի Արկուրից, բոլոր մացաները կդանվէին Մեծ Արարատից բաւական հետու և բոլոր միասին չէին կարող մտնել ջրհեղեղի մասին եղած հին աւանդութիւնների մէջ: Այսպէս, օրինակ, Նուիշւա Արարատից շատ վէրստերով չետու կզտնվի: Վար—նդ Ատրպատականում, Առ—նոյստն հարաւային Հայաստանի այն տեղերում, որոնց կակնարկեն մը վերե յառաջ բերած աւանդութիւնները: Այս բառը

համարելու չէ իրը նոյի անունը իւր մէջ պարունակող բառ։ Աս հասարակ դիզաւած է, Արագած, Մասիս ուրերի ստորատում գտնված նահանգները Հայերի մէջ կանուանվին։ Արքանք - որն, Մասեաց - որն կամ թէ որն Արքանք, որն Մասեաց, ուն բառից, որ է ստորատ։ Մեր յիշված անունը կզանվի երկու ձևով Արքայ որն, և որն Արքայ, որից կարելի է եղբակացնել, թէ այս անունն եւ կնշանակէ Արքայ որք պարբուած գտնված նահանգը։ Այս նահանգը Վասպուրականի ընդարձակ նահանգի մաս կկազմէր, Վանի լճից դեպի Հարաւ, Նոյնաբեղ, Հաղբակից ոչ հեռու կդանվի Արքա արքու Տես Հին Հայաստանի Տեղագրութիւն, 11, 96։

Գալով Նախիջևանին, այս քաղաքի անունը հների մէջ երբէք այնպէս չէ գրվում, ինչպէս որ կահանջէր ներքեւ բացատրած բառազնութիւնը, այսինքն Նորիջևան, ոյլ միշտ Նախճական (Պաղսմէսի մէջ Naxuana)։ Բայց եթէ մենք ուշք դարձնենք Յովսէփոս Փլաւիոսի առօքառիշնէնին, պիտի տեսնենք, որ նորա ժամանակ ես կար այնպիսի մի ստուգարանութիւնն, որը Հայաստանի մի տեղի անունը կծագեցնէր նոյի տապանից գուրս գալու փաստից։ Հետեարար, մենք չեցա կարող ենք ենթազրել, որ Փլաւիոսը Նորիջևանի Նկատի ունէր առօքառիշնէն տեղի մասին խօսելիս։ Բայց Նախճանը կարող էր ուրիշ տեղերում ես գտնվել։ Օրինակ Տաճկա Հայաստանում կայ Նախճական գիւղ (Ներսէս Սարգսեանի Նկարագրութիւնը, եր, 215 և Շիրակի քարտեղ), Վերօյիշված յօգուածներում, Dan. Haigh, ստար երկիրների մի ցուցակում (V. A. I. Հատ. II. 50) Ասորեստանի սեպաձև արձաններում կկարգայ. Naksuanna, Nizir, որ Գուտ անունին համանիչն է, և որը նորա կարծիքով Միջագետի մօտ կդանվէր։ Մենք ձեռին միջներ ըռւնիք այս ընթերցումն ստուգելու, իսկ եթէ նա ճիշդ է, այն ժամանակ շատ կմօտենայ այն բանին, ինչ որ մենք արգէն ասացինք աւանդութիւնների համաձայն տապանի կանգնած տեղի մասին։

Հարաւային Հայաստանում մինչեւ այժմ կպահպանվին ջրհեղեղի մասին եղած առասպելախառն պատմութիւններ, որոնց թուռում կայ չետեհալը. Տապանը ըլջելով ջրհեղեղի փոթորկալից ջրերի վերայ, վերջապէս մօտեցաւ Գրգուռան*) սարին Մշի մէջ և ասաց նորան. «Գրգուռ, առ ինձ, Այս բանի վերայ Գրգուռը պատասխանեց.

«Գնա ի Մասիս, գնա ի Մասիս

» Որ մէծ է քան զիս, որ բարձր է քան զիս»

(*) Մենք վերեւ տեսամք, որ այն սարը, որի վերայ կանգնեց տապանը Դամասկոսի մէջ բարիս կանուանվի, Այս բարիս բառը Յոյների մէջ կոմբածվէր եղիսամակն Բաշնի, աստ նշանակելու համար, իսկ բանաստեղծական լեզուի մէջ ընդհանրապէս Բաշն Միեւնցնը կարելի է ասել Գրգուռի մասին։ Արտերէն kurkur, ասորի karkurաց, կնշանակէ մեծ նաւ։ Սորան մի առանձին նշանակութիւն չինք տալիս, բայց կկարծենք որ շատ անդամ յատուկ անունի նշանակութիւնը տալիք կտայ առապելախառն պատմութեան ծագմանը։ Գրգուռ սարը Ամի լճի հիւսիս - ալեւելակողմ կդանիլի։

Պարզելով մեղ համար փոքր ինչ հարդիք, մենք կտեսնենք, որ Սուրբութ ձեւ
երբէք արտագրողի սխալ համարելու չէ Արարատի պյուինքն Մասիսի փո-
խարէն։ Սարարագ սարը, Փաւստոսի մի զիսում երեք անգամ գտնվելով
(միթէ արտագրողը երեք անգամ ևս սխալված է, արտագրելով միեւնոյն
բանը) և նշանակելով հարաւային Հայաստանի Արդուիք սարերից մինը,
կդանվի նաև ուրիշ մատենագրի մէջ, որն աւելի պարզ է խօսում նորա տե-
ղադրութեան մասին։ Մովսէս Խորենացին, Ա. Հոփիսիմեանների Ճանապար-
հորգութեան նկարագրութեան մէջ (Եր. 300) կասէ։ Եւ վասն յայտնի
անուանն նոքա գաղտ զնացեալ ընդ մէջ Կորտուր ընդ լեառն Սունք, ի
Քերկրացւոց գաւառին և ախտ աշացւութեան զնոսա տագնապեալ, և
կացեալ յաղօթս, երկու աղբերք բղինեցան, որ է ժանդ ջրայն կարմիր և
սպիտակ, և մինչեւ ցայսօր օգնէ աշացւացն յանուն սրբուհեացն։ Քայլ
այսր լերին ասի յԱսորւոց, թէ ի նոււազել ջուրցն հեղեղաց և հաս տապանն
ի զլուխ լերինն, որ է Սուրբութուր և ընդ մէջ անցեալ սղոցաձուկնն արգե-
լու զնաւն, և անուն քաղաքագեղջն կոչեցաւ թշհէն, այսինքն թէ ութ ողիք
ելին ի տապանէն։ Սորանից աւելի պարզ չէ կարելի որոշել, թէ որանդ
կդանվէր Սարարագ։

Գալով Արտաստ բառի ստուգաբանութեան, Խորենացին (զիր. Ա. զԼ.
ԺԵ, ԺԶ) այս անունի ծագումն կվերագրէ Արցախն և կասէ, որ սա կնշա-
նակէ Արցախ բաշտ Եթէ մինչեւ անգամ կարելի լինէր ենթագրել այսպիսի
ստուգաբանութիւնը, այն ժամանակը նա յարմար կլինէր մի այնպիսի
հարթ տեղի համար, ինչպէս Երասլի հովիտն էր, Արցախ։ Եսկ Արարատ
ասելով պէտքէ հասկանալ ոչ թէ հարթ, այլ լինուտ տեղը, ուստի նո-
րան բացատրելու համար պէտքէ զիմել այն խօսքերին, որոնք առ Բարձր-
անդակ կնշանակեն։ Այսպիսի ստուգաբանութեան կղիմեն բոլոր զիտենա-
կանները, Քօհարտից սկսած, կամենալով տեսնել այս անունի սկզբում այն-
պիսի բառը, որը թէ զէնդէրէնում և թէ երբայցերէնում առ կնշանակեր
Սա hara և har է։ Ե հարկէ, կարելի է ենթագրել, որ սկզբնական հ տա-
ռը դադարած է գործածվել, կամ թէ քանի մի բարբառներում նա չէր
լսվում, ինչպէս որ կերկի քանի մի բարձր սարերի անուններից, որոնց
մէջ hara դարձած է ար և արա։ Պարսկական սեպաձև արձանագրութիւնների
մէջ կդանվի (Beh. I, 37) Arakadris սարի անունը, Էլբրուս սարը, պարս-
հարբուր աւելի հին Arburdsch, կարող էր ստանալ իւր անունը զէնդական
haraից (սար) և bares - ից (բարձր), սկզբնատառը բաց թողնելով կլինի —
Arabares, Կարկիլի է յառաջ բերել Արտաստ, այժմ Ալաղեազ, սարի անու-
նը, և հետեւաբար Արարատ։ Սորան Շողիդէլ կաւելցնէ (Eran, 287—288)
Arparcin, Ardebil և Arbela սարի անունը, Եթէ մինչեւ անգամ ենթագրենք

(*) Bochart, Phaleg. Դւ. III : Pagum Phemanin id est octo, ab illis octo, qui ex arca exiverant, etiam Graeci memorant. Agath. lib. IV' Եր. 135.

Արպարսինի և Արգերիլի անունների մէջ ար-ի (սար) Ներկայութիւնը անկարելի է միւնչոյնը ենթաղրել Arbela անունի մէջ, որը բոլորովին ուրիշ արմատից *) կծագի: Յետոյ, կասէ Շպիգէլ, եթէ որ hara բառից կողմից է haraiti, միւնչոյն Ալբորջը միայն սարերի շղթայի և ոչ թէ գագամի մոքով, ուստի միւնչոյն հիման վերայ Ար-ից կարող էր յառաջ գալ arat, այսինքն սարերի շղթայ: Իսկ ամբողջ Ար—arat ուստի պիտի նշանակէ լեռնաշղթայի ամենաբարձր գագամը:

Այս ստուգաբանութեան մէջ կայ հաւանականութեան մի մաս, բայց խնդիրն այն է, որ Շպիգէլը շատերի նման չէ կարող հրաժարվել իւր նախաստեղծ մոքից, թէ Մեծ Արարատը Աստուածաշնչի Արարատն է: Մենք տեսանք, որ Մեծ Արարատ, Հայերի Մասիսը, չնայելով այսպիսի երկոյթի անհաւանականութեանը (17.000 ոտ. բարձրութիւն ունեցող փառաչեղ սար, որ կբարձրանայ զրեթէ նախ—Ասիայի մէջ և կերեկի զանազան կազմերից մի քանի վերստ հեռաւորութեամբ) անյայտ կմնայ հին Արշատակարանների մէջ: Գուցէ այն ևս լինի, որ մենք մինչև այժմն չկարողացանք նորան ճանաչել մեզ յայտնի հին սարերի անունների մէջ: Ա. զրբի: Արարատ բառը ի նկատի ունի ոչ թէ մի որևէ սարի գագամը, այլ ընդհանրապէս երկիրը և ըստ ամենայն հաւանականութեան, լեռնոտ երկիրը, ուստի մեզ կմուի որ Շպիգէլի բացատրութիւնը կկորցնէ իւր համոզողութեան մի մաս: Խնչեից սպասենք, մինչև որ Ասորեստանի Ուրբարքի անունը բացատրվի: որը որքան որ կարերի է գուշակել: պիտի նշանակէ նոյնը: ինչ որ Արարատ, այսինքն, սարերի երկիր կամ հիւսիսի երկիր:

Պէտք չէ նոյնպէս աչքից թռղնել, որ Մասէս անունը: որ կտան Հայերը Մեծ Արարատին, յայտնի էր հներին և կպատկանէր աւելի հարաւում գտնված սարերին: Ստրաբոնը (XI, 527) և Պտղոմէոսը (V, 18) կասեն Մասէս սարերի շղթայի մասին: որը կբաժանէ հարաւային Հայաստանը Միջազնաւորից: Մննդոց զրբի Փ. զիսում կյիշվի Մասէս (Հայկ. թարգմանութեան մէջ Մասիս, Լատ. Mesa) որպէս Սեմի սերունդի բնակութեան հիւսային սահմանը: Այս Մասիս կերեկի Ստրաբոնի և Պտղոմէոսի Մասիսն է: Իսկ Փաւստոսի մէջ կգտնենք (Դպր. Գ. 20) Մասէս սուր Վանի Ծից զեպի հիւսիս: «Ապհաւնեաց գաւառի մէջ, Մասիս մէծ սարի ստորոտում»: Այստեղ բոլորովին ասված է ոչ թէ Մեծ Արարատի, այլ Հայկան սարերի ամենաբարձր գագամներից մէկի: Սիփան—Դաղի մասին (12.000 ոտ.):

Բոլոր վերեւ առաջնական պէտքէ եղբակացնել, որ

—) Արտարքուս Երասմի վերայ զտնված յայտնի նահանգ է, և թէ նորան չպէտքէ խառնել Արարագի հետ:

(*) Այժմ յայտնի է որ Arbela յառաջ կդայ Ասորեստանի arbailu բառից այսինքն իրս աստուածերի (քաղաք), ուստի այսուել անունի արմատը ոչ թէ ար (սար) է, այլ արեա (լոր):

բ) Աստուածաշնչի Արտերութը և Ասօրիների Արտերութը կնշանակէ Սեմական մատենագիրների մեջ հարաւային հայտառան, Քիւրզստանի սարերը հետը, որոնք հայտառանը Միջագետքից կրաժանեն:

գ) Սուրբութ, որի վերայ, Ասօրիների աւանդութիւններով, կանգնեց տապանը, Մեծ Արարատ չէ, այլ հարաւ—հայկական սարերի գագաթներից մինն է:

Քննենք Խորենացու պատմութենից և ծննդարանական աղիւսակից յառաջ բերած մեր քաղուածները: Առաջին չորս անունների մասին ոչինչ չենք կարօղ աւելացնել, բացի նորանից ինչ որ արգէն առված է, Գառնանք հինգերորդին:

5. Հոյ! *) և 10 Կագմոս: Մենք արգէն ասացինք, որ հայկական ազգի ցեղապետների աղիւսակում արհեստաբար միացած են երկու ծննդարանութիւնը, որոնցից առաջինը սկզբում կպատկանէր հայերի ցեղին և կազմված էր հետեւել անձներից:

Հայկ. Կագմոս—Խոռ—Մանաւաղ, Բաղ:

Իսկ երկրորդը կներկայացնէ Հայերի ցեղի վիպանուն (Էպօնիմ) գարձած վից արանական Արմենակի սերունդը: Այժմ գառնանք քննելու առաջին ծննդարանութիւնը:

(Աշտառ-նակիններ):

Ա. Տ. Գ.

ՓՈԹՈՐԻԿ ՆԱՄԱՅԻՆ ԿԱԶԱԽԻՑ:

Օգոստոս ամսի մի գեղեցիկ առաւօտ ես զուրս եկայ տնից այն նոպատակով, որ այցելեմ ինձ ծանօթ Գօրդոն ընտանիքին, որ բնակումը մի քանի մղոն տարածութեամբ զրախտի մէջ: Թէև իմ նեղորուհին ճշգութեամբ ասումէր ինձ, որ փոթորիկ պէտքէ լինի, բայց եղանակացոյցը ոչինչ երերումն չէր ցոյց տալիս և խոստանումէր գեղեցիկ օր: Դրախտ կոչվումէր իմ ծանօթների բնակարանը նորա համար, որ այդտեղ թագաւորումը շքեղ բուսականութիւն և գտնվումէր երկու լեռնաշղթաներով պատած մի հիանալի հովտի մէջ:

Իմ սեաւ ծառայիս ուղեկցութեամբ, ես ուրախ և զոհ գնումէի այդ հրաշալի առաւօտը արևադարձային բնութեան զրաւիչ տեսարանների մէջով: Մենք աղատ շնչումէինք բոյսերի զովացուցիչ գոլորշին: մ.ր աչքերը յափշտակվումէին աննկարագրելի գեղեցիկ գաշտերի անընդհատ փոփոխվելով: Բայց յանկարծ ես ակամայ յիշեցի ծեր նեղորուհու գուշակութիւնը, որին տեղիք տուեց հպարտ և մեծատեսիլ երեսյթը: Սեաւ ամպերի վիթխարի պատերը բարձրացան ծովից և կախվեցան հեռու հօրիզոնի:

(*) Հայկական թագաւորների անունների առաջ դրված թուերը նոցա տեղը կնշանակեն Հայերի ցեղապետների ծննդաբանական աղիւսակում: Տես նախընթացը,